ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.03.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/21

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Ֆոր էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Հ. Ենգոյանի (լիազորագիր՝ տրված 02.03.2022թ.),

քննելով ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կարիքների համար ֆինանսական աուդիտի ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-22/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Ֆոր էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ի կողմից 24.02.2022թ. ներկայացված (25.02.2022թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2022/21 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Ֆոր էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Ֆոր էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 24.02.2022թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կարիքների համար՝ ֆինանսական աուդիտի ծառայությունների ձեռքբերման

նպատակով հայտարարվել է «ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-22/5» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.02.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության /կցվում է/ 4-րդ կետի համաձայն՝ «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտի բոլոր փաստաթղթերում, այդ թվում՝ գնային առաջարկի փաստաթղթում, բացակայում է մասնակցի անվանման, հայտը ստորագրող անձի պաշտոնի, անունի և ազգանվան վերաբերյալ պահանջվող տեղեկատվությունը:

Արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Ինչպես արդեն հայտնել ենք, ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կարիքների համար՝ ֆինանսական աուդիտի ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-22/5» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.02.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտի բոլոր փաստաթղթերում, այդ թվում՝ գնային առաջարկի փաստաթղթում, բացակայում է մասնակցի անվանման, հայտը ստորագրող անձի

պաշտոնի, անունի և ազգանվան վերաբերյալ պահանջվող տեղեկատվությունը:

Արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք ցանկանում հրավիրել հետևյալի վրա.

«Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտի փաստաթղթերի վերջում լրացված չէ ընկերության տնօրենի վերաբերյալ տեղեկությունները, չնայած գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ հայտում բացակայում է մասնակցի անվանման, հայտը ստորագրող անձի պաշտոնի, անունի և ազգանվան վերաբերյալ պահանջվող տեղեկատվությունը: Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունանլ, որ հայտով Ընկերության կողմից ներկայացվել է լիազորագիր, որով Ընկերության տնօրեն Անիկ Մարտիրոսյանը լիազորել է «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ի աշխատակից Գրիգոր Նազարյանին տնօրենի անունից ստորագրել ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կողմից «ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-22/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի փաստաթղթերը:

Բացի այդ, Հավելված 1.1-ով ներկայացվել է իրական շահառուների վերաբերյալ հայտարարգիր, որտեղ որպես Ընկերության գործադիր մարմնի ղեկավար նշված է Անիկ Մարտիրոսյանը, իսկ որպես հայտարարագիր ներկայացնող անձ՝ Գրիգոր Նազարյանը:

Այս տեսանկյունից գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված այն հանգամանքը, որ «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ի հայտում բացակայում է մասնակցի անվանման, հայտը ստորագրող անձի պաշտոնի, անունի և ազգանվան վերաբերյալ պահանջվող տեղեկատվությունը, ըստ էության, չի համապատասխանում իրականությանը, քանի որ մասնակցի անվանումը հենց նույն գնային առաջարկով նշվել է (վերևի հատվածում նշվել է, որ «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ն առաջարկում է պայմանագիրը կատարել հետևյալ գնով): Փաստացիորեն, բացակայել է միայն փաստաթղթի վերջում տնօրենի անուն, ազգանունը, սակայն այդ տեղեկությունը առկա է եղել թե՛ իրական շահառուների վերաբերյալ հայտարարգրում, թե՛ հայտին կցված լիազորագրում:

Գտնում ենք, որ այս առումով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը թույլ է տվել ձևական վարչարարություն, քանի որ հստակ նշեցինք, որ առկա է եղել և լիազորագիր և Հավելված 1.1-ով ներկայցվել է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր, որտեղ որպես Ընկերության գործադիր մարմնի ղեկավար նշված է Անիկ Մարտիրոսյանը,

իսկ որպես հայտարարագիր ներկայացնող անձ /հայտ ստորագրող անձ/՝ Գրիգոր Նազարյանը:

Այլ կերպ ասած, վերոհիշյալ փաստաթղթերից պարզ է դառնում, թե ով է հանդիսանում «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ի տնօրենը:

Այսպիսով, գտնում ենք, որ ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կարիքների համար հայտարարված Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետով սահմանված պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքը, ինչն էլ իր հերթին հանգեցրել է Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված մասնակցի մասնակցության իրավունքի իրականացման սահմանափակմանը կամ ոչ լիարժեք իրականացմանը:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է պարտավորեցնել «ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-22/5» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու 22.02.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությամբ «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 03.03.2022թ. ժամը 09:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է վերը շարադրված բողոքը:

2. <u>««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կողմից (հետայսու նաև՝ Պատվիրատու) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 03.03.2022թ. ժամը 09:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2022/21 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2022/21 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կարիքների համար ֆինանսական աուդիտի ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-22/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.02.2022թ. թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտի բոլոր փաստաթղթերում, այդ թվում՝ գնային առաջարկի փաստաթղթում, բացակայում է մասնակցի անվանման, հայտը ստորագրող անձի պաշտոնի, անվան և ազգանվան վերաբերյալ պահանջվող տեղեկատվությունը և որոշում կայացրել Ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

3. Ընկերության կողմից հայտով ներկայացվել է լիազորագիր տրված 17.02.2022թ. տնօրեն Անիկ Մարտիրոսյանի կողմից, համաձայն որի աշխատակից Գրիգոր Նազարյանը լիազորվել է տնօրենի կողմից էլեկտրոնային ստորագրել ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-22/5 ծածկագրով հայտարարած մրցույթի փաստաթղթերը:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ի 24.02.2022թ. բողոքը՝ կից փաստաթղթերով և գործում առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 30-րդ հոդվածի համաձայն՝

1. Մասնակիցը չի կարող նույն ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

(…)

2) գնային առաջարկը.

(…)

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին

ենթակետի դ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է գնային առաջարկ:

Նույն կետի 11-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: ***<u>Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ</u>***, (…):

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը

դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ ընթացակարգին մասնակցելու համար մասնակիցը համակարգի միջոցով ներկայացնում է հայտ: Հայտին կցվում են սույն հրավերով նախատեսված համապատասխան փաստաթղթերը (տեղեկությունները):

Մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝

(…)

Սույն հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

(…)

Այսպես, ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կարիքների համար ֆինանսական աուդիտի ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-22/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ն:

«Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ի կողմից ներկայացվել է հետևյալ Հավելված 2-ը՝ գնային առաջարկը.

ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ*

Ուսումնասիրելով ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-22/5 ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ն առաջարկում է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

ՀՀ դրամ

Չափա-բաժիններ ի համարներ ը	Ծառայության անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5=3+4
1	Ֆինանսական աուդիտի ծառայություններ	400,000 (Չորս հարյուր հազար)	80,000 (Ութսուն հազար)	480,000 (Չորս հարյուր ութսուն հազար)

***եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:*

____(Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)____ ____ ստորագրությունը____

Կ. Տ.

Digitally signed by NAZARYAN GRIGOR 3802910753
Date: 2022.02.17 15:47:12 AMT

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.02.2022թ. թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտի բոլոր փաստաթղթերում, այդ թվում՝ գնային առաջարկի փաստաթղթում, բացակայում է մասնակցի անվանման, հայտը ստորագրող անձի պաշտոնի, անվան և ազգանվան վերաբերյալ պահանջվող տեղեկատվությունը և որոշում կայացրել Ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

Ընկերության կողմից հայտով ներկայացվել է լիազորագիր տրված 17.02.2022թ. տնօրեն Անիկ Մարտիրոսյանի կողմից, համաձայն որի աշխատակից Գրիգոր Նազարյանը լիազորվել է տնօրենի կողմից էլեկտրոնային ստորագրել ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-22/5 ծածկագրով հայտարարած մրցույթի փաստաթղթերը:

Այսպիսով՝ «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Հավելված 2-ի՝ գնային առաջարկի ուսումնասիրության արդյունքում արձանագրում եմ, որ Հավելված 2-ում նշված է, որ պայմանագրի կատարման ընդհանուր գները առաջարկվում են «Ֆոր Էյ Քնսալթինգ»

ՓԲԸ-ի կողմից, ինչպես նաև Հավելված 2-ը էլեկտրոնային ստորագրել է Գրիգոր Նազարյանը, ով լիազորվել է տնօրեն Անիկ Մարտիրոսյանի կողմից 17.02.2022թ. (լիազորագիրը կցված է Ընկերության հայտին), հետևաբար գտնում եմ, որ Ընկերության հայտը գնային առաջարկի փաստաթղթում մասնակցի անվանման, հայտը ստորագրող անձի պաշտոնի, անվան և ազգանվան վերաբերյալ պահանջվող տեղեկատվության բացակայության հիմքով մերժման ենթակա չէր:

Նման պայմաններում գտնում եմ, որ «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ի կողմից 24.02.2022թ. ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ի կողմից 24.02.2022թ. ներկայացված բողոքը բավարարել.

Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու 22.02.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությամբ «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**